ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Էստոնիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Տաթևիկ Ստեփանյան
Էլինե Սանթրոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Տաթևիկ Ստեփանյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Էլինե Սանթրոսյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2024 թ. դեկտեմբերի 10-ից 14-ը՝ այցելություն Էստոնիայի Հանրապետության մայրաքաղաք Տալլին:

4. Հրավիրող կողմը.

«Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպություն

5. Գործուղման նպատակը.

Էստոնիայի համայնքահեն սոցիալական ծառայությունների ներդրման/զարգացման գործընթացի, ֆինանսավորման մեխանիզմների, ինչպես նաև ոլորտային բարեփոխումների, ծառայությունների թվայնացման ակտիվ գործընթացների ուսումնասիրություն և փորձի փոխանակում:

6. Քննարկված թեմաները.

- ✓ Էստոնիայի սոցիալական ծառայությունների համակարգը,
- ✓ Տեղական ինքնակառավարում և սոցիալական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմներ,
- ✓ Թվայնացման ռազմավարությունը և կարևորությունը սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացում,
- ✓ ՔՀԿ-ների և կառավարության համագործակցությունը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում,

- ✓ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքներին տրամադրվող ծառայություններ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

7.1 Էստոնիայի սոցիալական հարցերի նախարարությունում ներկայացվել է Էստոնիայի սոցիալական ծառայությունների համակարգի ընդհանուր նկարագիրը և առաջընթացը: Քննարկման հիմնական թեմաներն էին.

- Սոցիալական ծառայությունների զարգացման գործընթացը. ծառայությունների ապակենտրոնացում և համայնքահեն խնամքին անցում:
- Ապաինստիտուցիոնալացման գործընթացը և դրա ազդեցությունը ծառայությունների որակի և հասանելիության բարելավման վրա:
- Ծանոթացում Էստոնիայի սոցիալական ծառայությունների թվային համակարգին և դրա ինտեգրմանը ապակենտրոնացված ծառայությունների մատուցման մեջ:

7.2 Տալլինի քաղաքապետարանում քննարկվել է Տալլինի տեղական ինքնակառավարման և սոցիալական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմները, համայնքահեն ծառայությունների ինտեգրման առանձնահատկությունները, միգրացիոն ծրագրերը և դրանց առանձնահատկությունները:

7.3 Էստոնիայի էկոնոմիկայի և հաղորդակցության նախարարությունում ներկայացվել է թվայնացման ռազմավարությունը և կարևորությունը սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացում:

7.4 Էստոնիայի ոչ առևտրային կազմակերպությունների ցանցը ներկայացրել է ՔՀԿ-ների և կառավարության համագործակցությունը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում, ինչպես նաև ծառայությունների մատուցման և քաղաքականության բարեփոխման ոլորտներում լավագույն փորձն ու քաղած դասերը:

7.5 Էստոնիայի փախստականների խորհրդի հետ քննարկվել է ՔՀԿ-ների և կառավարության համագործակցությունը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում, իրականացվող ծրագրերը և այլն:

7.6 Էստոնական դիակոնիայի ընտանիքի կենտրոնում քննարկվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքներին տրամադրվող ծառայությունները, խնամքի մոդելներն ու անհատականացված ծառայությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերի միջև տեղի են ունեցել ոլորտային շփումներ: Ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ հանդիպումների ընթացքում ներկայացված նյութերն ու հյուրընկալող կազմակերպությունների կոնտակտային տվյալները կփոխանցվեն՝ հնարավոր հարցերի շուրջ քննարկումներ ունենալու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում ենք զարգացնել համագործակցությունը Էստոնիայի Հանրապետության սոցիալական ոլորտում՝ սոցիալական համայնքահեն ծառայությունների մատուցման լավագույն փորձը ՀՀ-ում կիրառելու նպատակով:

Ստորագրությունը, ամսաթիվը.

Տաթևիկ Ստեփանյան 18.12.2024

Էլինե Սանթրոսյան 18.12.2024